



թ. 1. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 447

Պատկերին մէջ կ'երևին շատին A, B, C, գրերը. իսկ ստորին ձախ անկիւնը եւրոպացի փորագրիչին փակագիր ստորագրութիւնը:

զանց հազուագիւտ՝ ունեցեր է նաեւ խորաններ, զարդագրեր, սակայն ամէնքն ալ զուտ Հայկական հին ձեռագրական գարդարուեստի հարազատ հետեւողութեամբ:

Այս հնագոյն տպագրութեանց, նաեւ Արգար Գաբրի ու Յովհաննէս Տերզնցիի հրատարակութեանց մէջ գործածուած պատկերները ոչինչ ունին Հայկական: Իսկ ասոնց մասին խօսիլ անկարելի է ինձ համար առ այժմ, քանի որ կը պակսին անոնց արտատպութիւնները: Սակայն անտարակոյս ատոնք արտադրութիւններն են ժամանակուան քիչ շատ կարող նշանաւոր օտար փորագրիչներուն:

Աւելորդ չըլլայ հոս քննել թէ ինչո՞ւ հին Հայ ԺԶ դարու հրատարակութեանց մէջ զարդերու, զարդագրերու, խորաններու համար վերամշակուած է հին ձեռագրական Հայ արուեստին այդ արուեստական ձեւաւորումները, իսկ պատկերներու համար նոյն այդ աղբիւրները մերժուած են: Հայ մանրանկարչական արուեստին

պատկերագործական ճիւղը, ուր մարդկային կենաց զանազան ձեւերը, շարժումները պիտի արտայայտուէին, կը մնար արեւելատիպ, այսինքն առանց խորքի, մթնոլորտի, հեռաւորութեան և մօտաւորութեան համեմատութեան: Նոյն նկարին հեռուն գտնուող մարդ մը երբեմն պատկերին առջեւ գտնուող մարդուն չափ մեծ կ'ըլլար, կամ շատ աւելի յաճախ անոր չափ որոշ և յստակ՝ թէեւ անկէ փոքր: Հորիզոնին, պատկերին խորքին մէջ ամէն բան որոշ և յստակ էր: Իսկ ընդհակառակն ԺԶ դարուն արդէն վերածննդեան յառաջացած վիճակը թոյլ պիտի չտար որ արեւելեան անխորք արուեստը հոն գետին գտնէր: Որով որեւէ Հայ հրատարակիչ չէր կրնար Հայկական զարդաձեւերէն անդին բան պահանջել Եւրոպացի տպագրական փորագրիչներէն՝ որոնց ճաշակին համար տանելի էր Հայ զարդարուեստը բայց ոչ մանրանկարչութիւնը, որ իրենց ըմ



թ. 2. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 711

Պատկերին ներքեւ կ'երևի Albrecht Durer-ի հանրածանօթ փակագիր ստորագրութիւնը, որուն աջակողմը՝ պատկերի փորագրիչները: